# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՈՂՋԱԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ
համայնք, 5-փ 7, Հեռ. 2-42-26 , norik.melkonyan@mail.ru

N 1/173
*08 նոյեմբեր 2019թ.*

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ուղարկվում Ողջաբերդ համայնքի ղեկավարի 2019 թվականին կայացրած թիվ 40-Ա և 45-Ա որոշումները:

Առդիր՝ 6 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

*Կատ. Քարտուղար՝ Մ. Կարապետյան*
*Հեռ.՝ 098-28-30-10*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հոկտեմբերի 2019 թվականի N 40-Ա

### ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 08-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝

*որոշում եմ*

1. Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնքի ղեկավարի 2019 թվականի դեկտեմբերի 08-ին կայանալիք հերթական ընտրությունների անցկացման համար Ողջաբերդ համայնքում ընտրական տեղամաս սահմանել 5-րդ փողոց թիվ 6 հասցեում գտնվող Ողջաբերդի միջնակարգ դպրոցը:
2. Սույն որոշման մասին տեղեկացնել լիազոր մարմնին, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնը տիրապետող կազմակերպության ղեկավարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 23
գ.Ողջաբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 նոյեմբերի 2019 թվականի N 41-Ա

## ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով

*որոշում եմ*

1. Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնքի ղեկավարի 2019 թվականի դեկտեմբերի 08-ին կայանալիք հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման համար Ողջաբերդ համայնքի տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղերն են՝
1)Ողջաբերդ համայնքի 1-ին փողոցի 1-ին փակուղու 1/1 հասցեում
2)Ողջաբերդ համայնքի 1-ին փողոցի 35 հասցեում
3)Ողջաբերդ համայնքի 5-րդ փողոցի 76 հասցեում:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը դրվում է համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

2019 թ. նոյեմբերի 23

գ.Ողջաբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

31 հոկտեմբերի 2019 թվականի N 42-Ա

## ՈՂՋԱԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 19-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 11-ի N 15-Ն հրամանով սահմանված <<Համայնքային ծառայողի ատեստավորման կարգը>> հավելվածով՝

*որոշում եմ*

1. Հաստատել 2020 թվականին հերթական ատեստավորման ենթակա համայնքային ծառայողների ցուցակը՝ *համաձայն հավելվածի*.
2. Սույն որոշման իրականացման պատասխանատվությունը դրվում է աշխատակազմի քարտուղարի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 31
գ.Ողջաբերդ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հոկտեմբերի 2019 թվականի N 43-Ա

## ՈՂՋԱԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 20-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2011 թվականի մայիսի 3-ի <<Համայնքային ծառայողների վերապատրաստման կարգը սահմանելու մասին>> N 05-Ն հրամանի՝

*որոշում եմ*

1. Հաստատել Ողջաբերդի համայնքապետարանի աշխատակազմի 2020 թվականին վերապատրաստման ենթակա համայնքային ծառայողների ցուցակը՝ *համաձայն հավելվածի.*
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 31

գ.Ողջաբերդ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

06 նոյեմբերի 2019 թվականի N 44-Ա

## ՀՈՂԱՄԱՍԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով Էդվարդ Զոհրաբի Նահապետյանին պատկանող անասնագոմի սեփականության վկայագիրը և <<ԳԻՍ-ԱՐՏ>> ՍՊԸ-ն որակավորված մասնագետի կողմից սահմանված կարգով տրված հատակագիծը՝

*որոշում եմ՝*

1.Քաղաքացի Էդվարդ Զոհրաբի Նահապետյանին սեփականության իրավունքով պատկանող, ՀՀ Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնքի փողոց 6 թիվ 31 հասցեում գտնվող անասնագոմի հողատարածքը՝ 0.42 հա, համարել նրա սեփականությունը՝ համաձայն հատակագծի:
2.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

2019 թ. նոյեմբերի 06
գ.Ողջաբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 նոյեմբերի 2019 թվականի N 45-Ա

## ԷԴՎԱՐԴ ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ԵՎ ՊԱՀԵՍՏԻ ԻՆՔՆԱԿԱՄ ԴՌՆԵՐԻ, ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ԵՎ ԲԱՑՎԱԾՔԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով այն հանգամանքը , որ դռների և պատուհանների ինքնակամ ձևափոխումները իրականացված են շենքի արտաքին պատերի հաշվին և հիմք ընդունելով էդվարդ Նահապետյանի դիմումը`

*որոշում եմ`*

1.էդվարդ Նահապետյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնքի 6-րդ փողոցի թիվ 31 հասցեում գտնվող անասնաշենքի և պահեստի բոլոր ինքնակամ դռները, պատուհանները և բացվածքը համարել օրինական` համաձայն հատակագծերի:
2.Հաշվի առնելով, որ վերը նշված դռներն ու պատուհանները կառուցվել են 2001 թվականի մայիսի 15-ից առաջ ինքնակամ դների և պատուհանների օրինականացման համար գումար չի գանձվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

2019 թ. նոյեմբերի 06

գ.Ողջաբերդ